

**ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ. ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Ռուս-թուրքական հարաբերությունները ԱՄՆ-
Թուրքիա աննախադեպ լարվածության համատեքստում**

ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿՅԱՆ

Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

Հոդվածում քննարկվում են թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերությունների զարգացման ընթացքը, վերջին տարիների այդ հարաբերություններում առկա լարվածության հիմնական դրդապատճառները, զարգացման նախադրյալներն ու հետանկարները: Մի շարք հիմնախնդիրների շուրջ Թուրքիայի և ԱՄՆ-ի տարաձայնությունների արդյունքում էապես մեծացել է երկու երկրների միջև անվստահությունը, որն իր արտացոլումն է ունեցել նաև Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերությունների վրա: Վերլուծվում է նաև ՆԱՏՕ-ի անդամ երկու դաշնակից երկրների ճգնաժամի բարենպաստ անդրադարձը թուրք-ռուսական համագործակցության ամրապնդման վրա: Ռուսաստանը, օգտվելով Անկարայի և Վաշինգտոնի միջև առկա ճգնաժամից, ինտենսիվորեն ամրապնդում է իր բազմաոլորտ կապերը Թուրքիայի հետ, ինչի արդյունքում մտորանում են Թուրքիայի տարաձայնությունները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ: Անդրադարձ է կատարվում վերջին տարիներին մերձավորարևելյան տարածաշրջանում և, հատկապես, սիրիական հակամարտությունում Ռուսաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի հակոտնյա շահերի բախումներին:

Բանալի բառեր

Թուրքիա, Ռուսաստան, ԱՄՆ, Մերձավոր Արևելք, սիրիական հակամարտություն, քրդական հարց, ՆԱՏՕ, ՀՕՊ համակարգեր

Նախաբան

Վերջին տարիներին թուրք-ամերիկյան ավելի քան կեսդարյա ռազմավարական համագործակցությունը ենթարկվում է ծանր փորձությունների: Թուրքիայի կողմից ռուսական C-400 հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) համակարգերի ձեռքբերման որոշումը ոչ միայն լրջորեն սրեց Անկարայի և Վաշինգտոնի միջև

առանց այդ էլ լարված հարաբերություններն, այլև նպաստեց Թուրքիայի և Ռուսաստանի միջև ռազմաքաղաքական համագործակցության խորացմանը: Օգտվելով թուրք-ամերիկյան խորացող ճգնաժամից՝ Ռուսաստանն ամրապնդում է աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական կապերը Թուրքիայի հետ՝ փորձելով վերջինիս ներառել տարածաշրջանում ռազմավարական շահերի իրականացման գործընթացում՝ ինչի արդյունքում խորանում են Թուրքիա-ԱՄՆ-ՆԱՏՕ տարաձայնությունները:

Թուրք-ամերիկյան ռազմավարական հարաբերություններում առաջացած ճգնաժամը և այդ համատեքստում Անկարա-Մոսկվա համագործակցության ընդլայնման հեռանկարները, նախ և առաջ պայմանավորված են մի շարք գործոններով և ռազմավարական շահերով: 20-րդ դարի կեսից Թուրքիան Միացյալ Նահանգների գլխավոր և հավատարիմ դաշնակիցներից մեկն էր: «Մառը պատերազմի» տարիներին՝ խորհրդային վտանգից Արևմտյան Եվրոպայի պաշտպանության ընդհանուր համակարգում, Թուրքիան դիտվում էր որպես ՆԱՏՕ-ի հարավային թև՝ դառնալով Արևմուտքի ֆորպոստը ԽՍՀՄ սահմաններին¹: 1990-ականներին Թուրքիան առանցքային դերակատարություն ունեցավ Իրաքի և Իրանի զսպման գործում, աջակցեց Վաշինգտոնին Բալկաններում ամերիկյան քաղաքականության իրականացման գործընթացում², ինչպես նաև «Արևելք-Արևմուտք» էներգետիկ միջանցքի կառուցման հարցում³: 2000-ականների սկզբին Թուրքիան Միացյալ

¹ **Atmaca Ö. A.**, The Geopolitical Origins of Turkish-American Relations: Revisiting the Cold War Years. *All Azimuth: A Journal of Foreign Policy and Peace*, 2014, 3, 1, 19-34; **Ergüvenç Ş.**, Turkey's Security Perceptions. *PERCEPTIONS: Journal of International Affairs*, June - August 1998, 3, 2, 1-5.

² **Güzelipek A. Y.**, Türk Dış Politikasının Bosna-Hersek Sınanı (1990-1995), *Çankırı Karatekin Üniversitesi İktisadi ve İdari Bilimler Fakültesi Dergisi*, Cilt: 3, Sayı: 1, Bahar 2013, 133-142; **Uzgel İ.**, The Balkans: Turkey's Stabilizing Role, *Turkey in World Politics: An Emerging Multi-regional Power*, edited by Barry M. Rubin, Kemal Kirişçi, Lynne Rienner Publishers: Boulder, 2001, p. 53.

³ **Souleimanov E., Kraus J.**, Turkey: An Important East-West Energy Hub, *Middle East Policy*, June 2012, XIX, 2, 157-168; **Tekin A., Williams P.A.** Turkey's Role as a 'Trans-European' Energy Corridor, *Geo-Politics of the Euro-Asia Energy Nexus. New Security Challenges Series*, 2011, London, pp. 145-165; **Çeviköz Ü.**,

Նահանգների ղեկավարած միջազգային կոալիցիայի անդամ էր և աֆղանական հիմնախնդրի կարգավորման գործընկերը⁴: Բացի այդ, 1990-ական թվականներին ԱՄՆ-ի աջակցությամբ առաջ քաշվեց «Թուրքական մոդել»-ի գաղափարը՝ նպատակ ունենալով մի կողմից թուլացնել Ռուսաստանի և Իրանի ազդեցությունը հետխորհրդային տարածաշրջանում, մյուս կողմից՝ նորանկախ մահմեդական հանրապետությունների զարգացումն ուղղորդել այդ մոդելի շրջանակներում⁵: Այս ամենը թուրք-ամերիկյան հարաբերությունները բնութագրում էր որպես սերտ ռազմավարական գործընկերություն: Այն գործուն և բովանդակային արտացոլում էր ստացել երկկողմ հարաբերություններում ավելի քան յոթ տասնամյակ՝ հաղթահարելով մի քանի տարածաշրջանային հակամարտություններ, ինչպես նաև միջազգային քաղաքական և տնտեսական իրավիճակների փոփոխություններ:

2002թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) իշխանության գալն անդրադարձավ նաև թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: ԱԶԿ-ի իշխանության տարիներին Թուրքիայի արդի արտաքին քաղաքականության հիմքում ընկած էր «Նոր օսմանականության» գաղափարախոսությունը և «Ռազմավարական խորություն» տեսությունը, որի գլխավոր տեսաբանն էր նախկին ԱԳ նախարար և վարչապետ Ա. Դավութօղլուն: Նա առաջարկում էր հարևան երկրների հետ հարաբերությունները կառուցել 5 հիմնական սկզբունքների հիման վրա, ինչպես նաև նախանշում էր տարածաշրջանային քաղաքա-

Could Turkey Become a New Energy Trade Hub in South East Europe?, *Turkish Policy Quarterly*, 2016, **15**, 2, 67-76.

⁴ **Tanrisever O.**, Afghanistan and Central Asia: NATO's Role in Regional Security since 9/11, IOS Press, 2013, pp. 160-165; **Rubin R. B.**, Peace-building and State-building in Afghanistan: Construction Sovereignty for Whose Security, *Third World Quarterly*, 2006, **27**, 1, 175-185; **Wildman D.**, **Bennis P.**, The War in Afghanistan Goes Global, *Critical Asian Studies*, 2010, **42**, 3, 469-480.

⁵ **Bal I.**, The Turkish Model and the Turkic Republics. *Perceptions: Journal of International Affairs*, September-November, 1998, **3**, 3, 1-17.

կանության նոր ուղենիշներն ու չափանիշները⁶: Դավութոյլուն կարևորում էր Թուրքիայի ակտիվ դերակատարությունն Օսմանյան կայսրության կազմում եղած տարածաշրջանների՝ Բալկանների, Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի, Կենտրոնական Ասիայի, Միջերկրական ծովի, կասպյան և սևծովյան ավազանների պետությունների հետ: Նա համարում էր, որ Թուրքիան չպետք է կախված լինի որևէ ուժից, այլ պիտի ձգտի հավասարակշիռ հարաբերությունների և դաշինքների:

Իրաքյան պատերազմն առաջին լուրջ փորձաքարը դարձավ թուրք-ամերիկյան հարաբերությունների համար: 2003թ. մարտի 1-ին 62 հազար ամերիկյան զինվոր Թուրքիայում տեղակայելու և թուրք զինվորներին երկրից դուրս ուղարկելու վերաբերյալ օրինագիծը մերժեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը⁷, ինչն, ըստ ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Փ. Վուլֆովիցի, «մեծ հիասթափություն» պատճառեց Վաշինգտոնի վարչակազմին⁸: Արդյունքում, Միացյալ Նահանգները 2003թ. Սադամ Հուսեյնի իշխանության տապալման հարցում սկսեց համագործակցել Իրաքի քրդական միավորումների հետ, ինչը Իրաքի Քրդստանի տարածաշրջանի կառավարության պաշտոնյաներին հնարավորություն տվեց մեծացնել իրենց կառավարման ինստիտուտների անկախությունը՝ առաջ բերելով քրդական ազգայնականությունը սպառնալիք համարող Թուրքիայի գայրույթը⁹: Իհարկե, դա դեռևս ռամավարական գործընկերության համար լուրջ վտանգ չէր: Ավելին, տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք կարող էին

⁶ **Davutoğlu A.**, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, İstanbul, 2001, s. 118.

⁷ **Altunışık B. M.**, *Turkey's Security Culture and Policy Towards Iraq*, *PERCEPTIONS: Journal of International Affairs*, Spring 2007, **XII**, 64-79.

⁸ *Turkey's future directions and U.S. – Turkey relations*, *Hearing before the Subcommittee on Europe of the Committee on International Relations, House of Representatives, One Hundred Eighth Congress*, First session, October 1, 2003, Serial No. 108-50, p. 25.

⁹ **Balci A.**, *Dış Politikada Hesaplaşmak: AK Parti, Ordu ve Kemalizm*, İstanbul, Etkileşim Yayınlar, 2015, s. 98;

Jüde J., *Contesting borders? The formation of Iraqi Kurdistan's de facto state*, *International Affairs*, 2017, **93**, 4, 860–861.

համարվել առաջացած իրավիճակի հաղթահարման և թուրք-ամերիկյան հարաբերությունների սերտացման դրսևորումներ: Մասնավորապես, 2009թ., ԱՄՆ նորընտիր նախագահ Բ. Օբաման առաջին արտասահմանյան այցը կատարեց Թուրքիա և, ոգևորվելով երկրի տնտեսական զարգացման և ժողովրդավարացման բարեփոխումների հաջողություններով, երկու երկրների միջև հարաբերություններն անվանեց «էտալոնային համագործակցություն»¹⁰: Ավելի ուշ, 2012թ. Օբաման Ռ. Թ> էրդողանին համարեց աշխարհի այն հինգ առաջնորդներից մեկը, որնց լիովին վստահում է¹¹: Սակայն, մի քանի տարի անց Ջ. Գոլդբերգի հետ հարցազրույցի ժամանակ Բ. Օբաման Թուրքիայի առաջնորդին բոլորովին այլ բառերով է նկարագրել՝ «անհաջողակ և ավտոկրատ»¹²:

Այսպիսով, թեև թուրք-ամերիկյան հարաբերությունների լարվածության համար իրաքյան պատերազմի ստեղծած նախադրյալների հաղթահարման փորձեր էին արվում, սակայն դրանք ավելի խորացան հատկապես վերջին տարիներին:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների տրանսֆորմացիան և առկա լարվածության հիմնական դրդապատճառները

Երկու երկրների միջև առկա խորը ճգնաժամը պայմանավորված է մի շարք հիմնախնդիրներով, որոնց շուրջ Անկարան և Վաշինգտոնը ունեն տրամագծորեն տարբեր դիրքորոշումներ և

¹⁰ Remarks by President Obama to the Turkish Parliament. The White House. Office of the Press Secretary, Washington, D.C., 06.04.2009, <https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/remarks-president-obama-turkish-parliament>; **Han K. A.**, From “Strategic Partnership” to “Model Partnership”: AKP, Turkish –US Relations and The Prospects Under Obama, - *UNISCI Discussion Papers*, N° 23 (May / Mayo 2010), p. 23.

¹¹ **Abramowitz I. M., Edelman S. E.**, From Rhetoric to Reality: Reframing U.S. Turkey Policy, *National Security Program: Foreign Policy Project*, Bipartisan Policy Center, 2013, p. 16.

¹² **Goldberg J.**, The Obama Doctrine, *The Atlantic magazine*, 07.04.2016, <https://www.theatlantic.com/magazine/archive/2016/04/the-obama-doctrine/471525/>; **Zanotti J.**, Turkey: Background and U.S. Relations In Brief, *US Congressional Research Service Report*, 18.03.2016, p. 2.

շահեր, մասնավորապես, սիրիական ճգնաժամն ու քրդական հարցը, Ֆեթհուլլահ Գյուլենի գործը, ամերիկացի բողոքական հոգևորական Էնդրյու Բրանսոնի քրեական հետապնդումը Թուրքիայում, ինչպես նաև թուրք-ռուսական համագործակցությունն ու դրա անդրադարձը Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերությունների վրա:

Անկարայի և Վաշինգտոնի միջև տարաձայնությունները հատկապես խորացան սիրիական հակամարտության հետևանքով, որտեղ Թուրքիայի և ԱՄՆ-ի դիրքորոշումները տարբերվում էին հատկապես Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի և հակամարտության մեջ ներգրավված զինված խմբավորումների հետ կապված («սիրիական ընդդիմությունից» մինչև քրդական աշխարհագորայիններ): Քաղաքական անկայունությունը Մերձավոր Արևելքում ստիպեց Թուրքիային վերանայել արտաքին քաղաքականությունը և ազգային անվտանգության ռազմավարական ուղղությունները¹³:

Եթե ԱՄՆ-ը և, ընդհանուր առմամբ՝ Արևմուտքը, 2010թ. կեսին դադարեցին կտրուկ պնդել իշխանությունից Ասադի հեռացման անհրաժեշտությունը, ինչպես դա եղել էր սիրիական ճգնաժամի սկզբում, ապա Ռեջեփ Թայիփ Էրդոդանը կտրականապես դեմ էր նման մոտեցմանը: Այն իր արտացոլումը ստացավ նաև 2013թ. Սիրիայից քիմիական զենքի դուրսբերման մասին պայմանավորվածությունից հետո¹⁴, երբ ի հակադրություն ԱՄՆ-ի, որի պաշտոնական հռետորաբանության մեջ Ասադի նկատմամբ մոտեցումների փոփոխություններն ակնհայտ էին, Թուրքիան չհրաժարվեց Սիրիայի առաջնորդի նկատմամբ կոշտ դիրքորոշումից՝ չնայած Ռուսաստանի և Իրանի հետ մերձեցմանը Սիրիայի

¹³ **Ульченко Н.Ю., Шлыков П.В.**, Динамика российско-турецких отношений в условиях нарастания глобальной нестабильности, М.: Институт востоковедения РАН, 2014, сс. 18–29.

¹⁴ **Weitz R.**, Syria and Beyond: The Future of the Chemical Weapons Threat, *Institut Français des Relations Internationales, Security Studies Center, Proliferation Paper 51*, December 2014, pp. 27-28; **Weiss S. A., Ng N.**, Collision Avoidance: Lessons From U.S. and Russian Operations in Syria, *Carnegie Endowment for International Peace*, March 2019, p. 6.

հարցում¹⁵: Նմանատիպ իրավիճակ էր նաև Ասադի ռեժիմի դեմ պայքարող զինված խմբավորումների հետ կապված: 2014 թվականից հետո Միացյալ Նահանգները կրճատեցին սիրիական ընդդիմությանը տրամադրվող ռազմական օգնության ծավալները, իսկ 2017թ. հուլիսին ԱՄՆ նորընտիր նախագահ Դոնալդ Թրամփը որոշեց կասեցնել Ասադի դեմ պայքարող ստորաբաժանումներին տրամադրվող ցանկացած ռազմական օգնություն¹⁶: Ի հակադրություն ԱՄՆ-ի, Անկարան ոչ միայն չկրճատեց ռազմատեխնիկական աջակցությունը Ասադի դեմ պայքարող զինյալներին, այլև ակտիվորեն օգտագործեց այդ զինյալներին՝ որպես դաշնակիցներ, «Եփրատի վահան» և «Ձիթենու ճյուղ» գործողությունների ժամանակ¹⁷:

Անկարան և Վաշինգտոնը տրամագծորեն հակառակ մոտեցումներ ցուցաբերեցին նաև «Իսլամական պետություն»-ից (ԻՊ), «Ջաբհաթ ալ Նուսրա»-յից և այլ ահաբեկչական խմբավորումների կողմից եկող սպառնալիքները բացահայտելու հարցում, որը հստակ դրսևորվեց ԻՊ-ի ընդլայնման դեմ պայքարի ընթացքում: Մասնավորապես, Թուրքիան միացավ ԻՊ-ի դեմ տարվող գործողությունների նպատակով ԱՄՆ գլխավորությամբ ստեղծված կոալիցիային միայն 1 տարի անց՝ 2015թ. հուլիսին, և միայն դրանից հետո թույլ տվեց օգտագործել «Ինջիրլիք» ռազմակայանը՝ ահաբեկիչների դիրքերին օդային հարվածներ հասցնելու համար: ՆԱՏՕ-ի

¹⁵ Шлыков В. П., Турецко-американские отношения в зеркале ближневосточного и евро-атлантического измерений, *Актуальные проблемы Европы*, 2019, 1, с. 212.

¹⁶ Jaffe G., Entous A. Trump ends covert CIA program to arm anti-Assad rebels in Syria, a move sought by Moscow, *The Washington Post*, 19.07.2017, https://www.washingtonpost.com/world/national-security/trump-ends-covert-cia-program-to-arm-anti-assad-rebels-in-syria-a-move-sought-by-moscow/2017/07/19/b6821a62-6beb-11e7-96ab-5f38140b38cc_story.html; Humud E. C., Blanchard, M. C., Nikitin B. M., *Armed Conflict in Syria: Overview and U.S. Response. US Congressional Research Service Report*, 02.12.2019, p. 37.

¹⁷ Van Leeuwen J., Van Veen E., Turkey in northwestern Syria: Rebuilding empire at the margins, *CRU Policy Brief*, Netherlands Institute of International Relations Clingendael, June 2019, pp. 1-10; Dacrema E., Talbot V., Rebuilding Syria: The Middle East's Next Power Game?, *The Italian Institute for International Political Studies (ISPI)*, 2019, p. 84.

դաշնակցի նման պահվածքը լուրջ դժգոհություն առաջացրեց Արևմուտքում¹⁸:

Այսպիսով, վերոնշյալ իրադարձություններն ակնհայտորեն ցույց տվեցին, որ Թուրքիան համակարծիք չէ Միացյալ Նահանգների հետ ԻՊ-ին դիմակայելու և Սիրիայում ու Իրաքում ահաբեկչական խմբավորումների ընդլայնման դեմ պայքարի հարցում: Դրանք ստիպեցին Վաշինգտոնին Մերձավոր Արևելքում այլընտրանքային դաշնակիցներ փնտրել: Եվ նման մարտավարական դաշնակիցներ դարձան իսլամիստներին դիմակայելու հարցում իրենց բարձր արդյունավետությունն ապացուցած Սիրիայի քրդական «Ժողովրդական ինքնապաշտպանական ուժերը» (YPG, ԺԻՌԻ), որոնց Թուրքիան համարում է ահաբեկչական կազմակերպություն¹⁹:

Ս. Ուլգենի կարծիքով. «Պատմության մեջ ոչ մի այլ քաղաքական որոշում այնքան չի վնասել Թուրքիայում Միացյալ Նահանգների հեղինակությանը, որքան Սիրիայի քրդական «Ժողովրդական ինքնապաշտպանական ուժերի» շարունակական սպառազինումը»²⁰: ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունները կտրուկ վատթարացան 2016թ. Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման փորձից հետո: Հուլիսի 15-ի զիշերը իրագործված հեղաշրջման ձախողված փորձը զգալի արձագանք ունեցավ ոչ միայն պետության ներսում, այլև միջազգային ասպարեզում: Ապստամբության ճնշումից հետո երկրում անհապաղ սկսվեցին գործող նախագահի տապալման ենթադրյալ կողմնակիցների զանգվածային ձերբակալություններ: Նախագահ Ռ. Թ. Էրդողանի կոշտ

¹⁸ **Sly L., De Young K.**, Turkey agrees to allow U.S. military to use its base to attack Islamic State, *The Washington Post*, 23.07.2015, https://www.washingtonpost.com/world/middle_east/turkey-agrees-to-allow-us-military-to-use-its-base-to-attack-islamic-state/2015/07/23/317f23aa-3164-11e5-a879-213078d03dd3_story.html; **Zanotti J.**, Turkey: Background and U.S. Relations In Brief, *US Congressional Research Service Report*, 23.12.2015, p. 10.

¹⁹ **Шлык В. П.**, նույն տեղում, էջ 203-214:

²⁰ Почему Турция отказывается отменить покупку С-400?, *Вести.Экономика*, 24.06.2019, <https://www.vestifinance.ru/articles/121260>.

արձագանքն այդ իրադարձությանն առաջ բերեց Արևմուտքի խորացող բացասական վերաբերմունքը²¹:

Իր հերթին Էրդողանը բացահայտ մեղադրում էր Արևմուտքին, հատկապես, ԱՄՆ-ին, ոչ միայն հեղաշրջման փորձից հետո իրեն չաջակցելու, այլև հեղաշրջման կազմակերպման համար մեղադրվող 1999թ.-ից ԱՄՆ Փենսիլվանիա նահանգում բնակվող իմամ Ֆ. Գյուլենին Անկարային չհանձնելու համար²²: Էրդողանը, մասնավորապես, հայտարարել էր. «Ես դիմում եմ ԱՄՆ-ին. դուք ի՞նչ ռազմավարական գործընկեր եք, եթե ձեր երկրում ընդունում եք մի մարդու, որին ես խնդրում եմ արտահանձնել՝ հընթացս Արևմուտքին մեղադրելով ահաբեկչությանն աջակցելու համար և ակնարկելով, որ «հեղաշրջման սցենարը գրվել է Թուրքիայի սահմաններից դուրս»²³: Հեղաշրջման ձախողված փորձը նպաստեց Թուրքիայում հակաամերիկյան և հակաարևմտյան տրամադրությունների մեծացմանը: Դրա մասին է վկայում նաև 2017 թվականի վերջին ամերիկյան Պյու հետազոտական կենտրոնի (Pew Research Center) իրականացրած սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքները, համաձայն որի՝ Թուրքիան հանդիսանում էր միակ երկիրը, որտեղ, ըստ հետազոտության արդյունքների, գլոբալ սպառնալիքների շարքում առաջին տեղում ոչ թե միջազգային ահաբեկչությունը կամ միգրացիոն հոսքերն էին, այլ ԱՄՆ քաղաքականությունը (նման պատասխան էր տվել հարցվածների 72%-ը)²⁴: Ուստի պատահական չէ, որ զինվորական հեղաշրջման

²¹ **Ataman M.**, July 15 Coup Attempt in Turkey: Context, Causes and Consequences,- *SETA Publications*, 2017, pp. 234-238; **Sloat A.**, The West's Turkey Conundrum, *Foreign Policy at Brookings*, Robert Bosch Foundation Transatlantic Initiative (BBTI), 2018, pp. 5-6.

²² **Abramowitz M., Edelman E.**, Beyond the Myth of Partnership: Rethinking U.S. Policy Toward Turkey, *National Security Program: Foreign Policy Project*, Bipartisan Policy Center, 2016, p. 11.

²³ **Hille K., Pitel L.**, West uneasy as Moscow and Ankara edge closer, *Financial Times*, 07.08.2016, <https://www.ft.com/content/bbcd39ba-5b0d-11e6-9f70-badea1b336d4>.

²⁴ **Manevich D., Chwe H.**, Globally, more people see U.S. power and influence as a major threat, *Pew research center*, 01.08.2017, <https://www.pewresearch.org/fact->

անհաջող փորձից հետո 2016թ. աշնանը, ի թիվս այլ օտարերկրյա քաղաքացիների, ձերբակալվեց Իզմիր քաղաքում երկար տարիներ քրիստոնեական քարոզչությամբ զբաղվող ավետարանչական եկեղեցու հովիվ, ԱՄՆ քաղաքացի Է. Բրանսոնը՝ Ֆ. Գյուլենի շարժմանը հարելու և օժանդակելու մեղադրանքով²⁵: ԱՄՆ-ում Բրանսոնի ձերբակալությունը համարվեց քաղաքական, իսկ ամերիկացի պաշտոնյաները պահանջեցին, որ Բրանսոնն ազատվի կալանքից: ԱՄՆ Նախագահ Դ. Թրամփը նույնպես աջակցություն հայտնեց ձերբակալված քարոզչին՝ նշելով, որ Է. Բրանսոնը լավ մարդ և քրիստոնյա առաջնորդ է, ով առանց որևէ պատճառաբանության հետապնդվում է Թուրքիայում՝ հույս հայտնելով, որ նրան կթողնեն վերադառնալ տուն²⁶:

Բրանսոնի ազատագրկումը ոչ միայն լուրջ դիվանագիտական ճգնաժամի պատճառ էր դարձել ՆԱՏՕ-ի երկու դաշնակիցների հարաբերություններում, այլև էապես ազդել էր Թուրքիայի տնտեսության վրա: Հոգևորականին ազատ արձակելու պահանջով Վաշինգտոնը մի շարք պատժամիջոցներ սահմանեց Թուրքիայի նկատմամբ, ինչից հետո ազգային արժույթը սկսել էր կտրուկ արժեզրկվել՝ տնտեսությունը կանգնեցնելով լուրջ խնդիրների առաջ²⁷: Ուստի Անկարան փորձեց մեղմել թուրք-ամերիկյան լարվածությունը: 2018թ. հոկտեմբերի 12-ին Իզմիրի դատարանը թեև 3 տարվա ազատագրկման դատապարտեց Է. Բրանսոնին, սակայն վերջինս դատարանի դահլիճից ազատ արձակվեց՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեք տարի նա կալանքի տակ էր

tank/2017/08/01/u-s-power-and-influence-increasingly-seen-as-threat-in-other-countries/.

²⁵ **Erdemir A., Edelman E.**, Erdogan's Hostage Diplomacy: Western Nationals in Turkish Prisons, *The Foundation for Defense of Democracies* (FDD), Washington, DC, pp 6-8.

²⁶ **Erdemir A., Edelman E.**, նույն տեղում, էջ 21-22; **Maza C.**, Andrew Brunson Case: Donald Trump Threatens Turkey With Sanctions if Pastor is not Released, 26.07.2018, <https://www.newsweek.com/donald-trump-threatens-turkey-sanctions-if-christian-pastor-not-released-1043964>.

²⁷ **Martin W.**, The lira is tumbling after the US said it's ready to kick its battle against Turkey up a notch, *Business Insider*, 17.08.2018, <https://www.businessinsider.com/trump-usa-sanctions-against-turkey-2018-8>.

անցկացրել նախնական հետաքննության ժամանակ: ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի արձագանքը չուշացավ: Սպիտակ տան ղեկավարը, ով ամիսներ շարունակ պահանջում էր Թուրքիայից ազատ արձակել Բրանսոնին՝ նրա կալանքը համարե-լով խայտառակություն, թվիթերյան իր էջում գրել էր. «Իմ մտքերն ու աղոթքները Բրանսոնի հետ են, հույս ունենք, որ նա շուտով տուն կվերադառնա՝ ակնարկելով, որ Բրանսոնն ազատության մեջ է հայտնվել նաև իր վարչակազմի ջանքերով»²⁸: Թվում էր Բրանսոնի ազատ արձակումը կնպաստեր թուրք-ամերիկյան հարաբերությունների լարվածության մեղմացմանը, սակայն ռուսական C-400 համակարգերի ձեռքբերման Թուրքիայի որոշումը երկկողմ հարաբերությունները հասցրեց աննախադեպ լարման:

2017թ. դեկտեմբերին Մոսկվան և Անկարան ստորագրեցին ռուսական C-400 հակաօդային պաշտպանության համակարգեր ձեռք բերելու գործարքը, ըստ որի 2.5 միլիարդ ԱՄՆ դոլարի ռուսական վարկային համաձայնագրով Թուրքիան գնելու էր C-400 զենիթահրթիռային չորս համալիր՝ դառնալով ՆԱՏՕ-ի անդամ առաջին երկիրը, որը Ռուսաստանի հետ նման խոշոր ռազմական գործարքի էր գնում²⁹: Թուրքիայի նման որոշումը խիստ դժգոհություն առաջացրեց ոչ միայն ԱՄՆ-ի, այլև ՆԱՏՕ-ի ղեկավարության շրջանում: Չուշացան նաև ԱՄՆ-ից հնչող սպառնալիքները: ՆԱՏՕ-ի 70 ամյակին նվիրված հոբելյանական միջոցառմանը ԱՄՆ-ի փոխնախագահ Մայք Փենսը նախազգուշացրեց Անկարային. «Թուրքիան պետք է ընտրի. մնալ ամենահաջողված ռազմական դաշինքի կարևորագույն գործընկերը, թե ոչ խոհեմ որոշումներ կայացնելով՝ վտանգել մեր

²⁸ **Kelly C., Sullivan K.**, Released US Pastor Andrew Brunson Returns to US, Meets With Trump, *CNN*, 14.10.2018, <https://edition.cnn.com/2018/10/13/politics/us-pastor-andrew-brunson-trump-oval-office/index.html>.

²⁹ **Kibaroglu M.**, On Turkey's Missile Defense Strategy: The Four Faces of the S-400 Deal Between Turkey and Russia, *SAM Papers*, No.16, April 2019, p. 3.

գործընկերային հարաբերություններն ու դաշինքը»³⁰: Ի պատասխան Փենսի սպառնալիքներին, Թուրքիայի փոխնախագահ Ֆաուր Օքթայը հայտարարեց, որ «Միացյալ Նահանգները պետք է ընտրեն. Թուրքիայի դաշնակիցը մնալ, թե վտանգել երկու երկրների բարեկամությունը՝ ուժերը միավորելով ահաբեկիչների հետ»³¹: Միացյալ Նահանգների համար անընդունելի էր, որ ՆԱՏՕ-ի առանցքային անդամ Թուրքիան պատրաստվում էր ձեռք բերել ռուսական բարդ հակաօդային համակարգ, որն ի սկզբանե նախագծված է հետևելու ու հարվածելու ՆԱՏՕ-ի մարտական ինքնաթիռներին: Այնուհետև Պենտագոնը զգուշացրեց, որ ռուսական ՀՕՊ համակարգերը ձեռք բերելու դեպքում Թուրքիան կկորցնի իր տեղը ԱՄՆ-ի F-35 ռազմական ինքնաթիռների ծրագրում և պատժամիջոցների առաջ կկանգնի³²: Որպես այնընտրանք ԱՄՆ-ն Թուրքիային առաջարկում էր ամերիկյան Patriot ՀՕՊ համակարգը: ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարեց, որ թույլատրում է Թուրքիային մոտ 3,5 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ գործարքով գնել իրենց համակարգերը³³: Թուրքիան մերժեց ռուսական ռազմական պաշտպանության համակարգերի ձեռքբերման մասին որոշումը վերանայելու Վաշինգտոնի առաջարկը: Որպես պատճառ մատնանշեց, որ Միացյալ Նահանգները գործընկերներին Patriot ՀՕՊ համակարգի ձեռքբերման համար զեղչ չի տրամադրում և հրաժարվում է տեխնոլոգիաների փոխանակումից³⁴:

³⁰ **Hacaoglu S., Kozok F.**, U.S.-Turkey Showdown Escalates as Pence Warns on Missiles, *Bloomberg*, 04.04.2019, <https://www.bloomberg.com/news/articles/2019-04-04/u-s-turkey-showdown-escalates-as-pence-gives-missiles-warning>.

³¹ **Keşvelioğlu A., Oğuz A., Akca M. E., Türkcian L. M.**, Turkey's Procurement of the S-400 System : An Explainer, *TRT World Research Centre*, 2019, p. 7.

³² **Özer İ. A.**, Arming Countries: With or Without the United States, *SETA Analysis*, NO.55, 2019, p. 18.

³³ **Yeşiltaş M., Aslan M., Özkizilcik Ö.**, SETA Security Radar: Turkey's Security Landscape in 2019, *SETA Report*, 2019, pp. 48-49.

³⁴ **Mehta A.**, Turkey cleared by US for \$3.5 billion Patriot missile deal, despite S-400 row, *Defense News*, 18.12.2018, <https://www.defensenews.com/global/europe/2018/12/19/turkey-cleared-by-us-for-35-billion-patriot-missile-deal-despite-s-400-row/>; **Wemer A. D.**, After Russian air defense deal, can Ankara and Washington repair their relationship?, *Atlantic*

Հարկ է նշել, որ C-400 համակարգն օգտագործելու Թուրքիայի որոշումն ավելի խորը արմատներ ունի: Արդեն 10 տարի է Անկարան փորձում է ձեռք բերել ամերիկյան Patriot համակարգերը, բայց առանց հաջողության: ԱՄՆ-ը դիմակայում էր Թուրքիայի պահանջներին՝ տեխնոլոգիան փոխանցելու և տեղական արտադրություն սկսելու հարցում: Արդյունքում, Անկարան սկսեց հավանական փոխարինողներ փնտրել, ներառյալ 2013թ. չինական հակահրթիռային համակարգը, որը տապալվեց ԱՄՆ-ի առարկությունների պատճառով: 2016թ. Էրդողանի դեմ հեղաշրջման փորձից հետո, ներառյալ Թուրքիայի խորհրդարանի օդային ուժերի կործանումը, հակաօդային համակարգի ձեռքբերումը Անկարայի համար հրամայական դարձավ:

Երկու տարի շարունակ Վաշինգտոնն ամեն ինչ անում էր՝ համոզելու Էրդողանին, որ C-400-ի գործարքը չեղյալ հայտարարի: C-400-ը ոչ միայն անհամատեղելի է Թուրքիայում ՆԱՏՕ-ի պաշտպանական ենթակառուցվածքի հետ, այդ գործարքը կարող է նաև հանգեցնել ԱՄՆ-ի պատժամիջոցների սահմանմանը: Սակայն ոչինչ չստիպեց Էրդողանին փոխել որոշումը, ինչի արդյունքում ռուսական ՀՕՊ համակարգերի առաջին խմբաքանակը 2019թ. հուլիսին տեղափոխվեց Թուրքիա, որից հետո ԱՄՆ-ն հայտարարեց, որ Թուրքիային հեռացնում է իր F-35 կործանիչների ծրագրից: Մասնավորապես, Սպիտակ տան մամուլի քարտուղար Ս. Գրիշամը նշել էր. «Ցավոք, Ռուսաստանից C-400 օդային պաշտպանության համակարգերի գնման վերաբերյալ Թուրքիայի որոշումը թույլ չի տալիս Անկարայի շարունակական ներգրավվածությունը F-35-ի ծրագրում: Թուրքիան ավելի քան 65 տարի ՆԱՏՕ-ի վստահելի գործընկերը և դաշնակիցն է, սակայն C-400-ի ձեռքբերումը խոչընդոտում է ռուսական համակարգերից հրաժարվելու ՆԱՏՕ-ի բոլոր դաշնակիցների ստանձնած պարտավորությունների կատար-

մանը»³⁵: F-35 կործանիչների ծրագրից Թուրքիայի հեռացնելը ոչ միայն ռազմական, այլև տնտեսական առումով լուրջ հարված էր Անկարային: Թուրքիան ստորագրել էր ԱՄՆ-ից 100 հատ F-35 գնելու պայմանագիր և ավելի քան մեծ ներդրումներ է կատարել դրա արտադրության ծրագրում, իսկ թուրքական ընկերությունները արտադրում են այդ կործանիչների 937 մասեր³⁶:

Փոխադարձ սպառնալիքները խորացրեցին թուրքամերիկյան ճգնաժամը՝ վտանգելով երկու երկրների շուրջ 70-ամյա ռազմական համագործակցությունը և Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերությունները: Անկարայի կողմից ռուսական C-400 հրթիռների ձեռքբերումը, չնայած Միացյալ Նահանգների և ՆԱՏՕ-ի այլ անդամների ունեցած առարկություններին, հանգեցրեց մինչև իսկ ՆԱՏՕ-ից Թուրքիայի հեռացման կոչերի³⁷: Դաշինքի անդամները մատնանշում էին ոչ միայն Անկարայի ներքին քաղաքական սխալները, այլև մտահոգ էին, որ ՆԱՏՕ-ի անվտանգության քաղաքականության մեջ վերջինս անվստահելի գործընկեր է: Վաշինգտոնի որոշումը՝ Թուրքիային հեռացնել F-35 կործանիչի ծրագրի հետագա մասնակցությունից, անշուշտ, արտացոլում էր ոչ միայն ԱՄՆ անհանգստությունը³⁸:

³⁵ Statement by the Press Secretary, 17.07.2019, <https://www.whitehouse.gov/briefings-statements/statement-press-secretary-64/>; **Leone D.**, Turkey Might Lose the F-35 Thanks to Buying Russia's S-400 System. So What About Greece?, *The National Interest*, 18.07.2019, <https://nationalinterest.org/blog/buzz/turkey-might-lose-f-35-thanks-buying-russias-s-400-system-so-what-about-greece-67632>.

³⁶ **Keşvelioğlu A., Oğuz A., Akca M. E., Türkcen L. M.**, Turkey's Procurement of the S-400 System: An Explainer, *TRT World Research Centre*, 2019, p. 15; **Slijper F.**, Power Projection: Turkey's Military Build-Up: Arms Transfers and an Emerging Military Industry, PAX: Power Projection, 2017, pp. 19-26.

³⁷ **Sari A.**, Can Turkey be Expelled from NATO? It's Legally Possible, Whether or Not Politically Prudent, 15.10.2019, <https://www.justsecurity.org/66574/can-turkey-be-expelled-from-nato/>.

³⁸ **Carpenter G. T.**, It's time to expel Turkey from the Western alliance, *The Washington Post*, 19.07.2019, <https://www.washingtonpost.com/opinions/2019/07/19/its-time-expel-turkey-western-alliance/?noredirect=on>.

Այս համատեքստում զարմանալի չի թվում 2019թ. մայիսի 21-ին Թուրքիայի պաշտպանության նախարար Հ. Աքարի հայտարարությունը, որ երկիրը պատրաստվում է ԱՄՆ պատժամիջոցներին³⁹: Պատճառը, անշուշտ, Թուրքիայի կողմից ռուսական C-400 ձՕՊ համակարգերի ձեռքբերումն էր: Ըստ Ա. Քուռույի, թուրք քաղաքական գործիչները, նախագահ Ռ. Թ. Էրդողանի գլխավորությամբ, լրջորեն քննարկում են Թուրքիայի աշխարհաքաղաքական դիրքը՝ ՆԱՏՕ-ին անդամակցությունը դադարեցնելու դեպքում: Նման պահանջարկ կա արդեն թուրքական հասարակության որոշ հատվածների շրջանում: Վերջին հինգ տարիների ընթացքում թուրքական հասարակության մեծամասնությունը հակամերիկյան դիրքորոշում է որդեգրել, ամենայն հավանակա-նությամբ, ամենաբարձր մակարդակի՝ 1952թ. ի վեր⁴⁰: Չնայած ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ հարաբերություններում առկա մարտահրավերներին, Թուրքիան, ամենայն հավանականությամբ, կշարունակի մնալ ՆԱՏՕ-ի մաս, քանզի բաժանումը շատ վնասաբեր կլիներ երկու կողմերի համար: Նախ, ՆԱՏՕ-ն ոչ միայն ռազմական դաշինք է, այլև քաղաքական միություն է, և դրա մաս դառնալը նման է զարգացած աշխարհի մաս կազմելուն, որին Թուրքիան ձգտում է 1923 թվականից ի վեր: Երկրորդ, դաշինքում մնալով՝ Թուրքիան ի վիճակի է մեծապես ազդել Բրյուսելի քաղաքականության վրա: Սկզբունքորեն, ՆԱՏՕ-ի բոլոր որոշումները պահանջում են համաձայնություն: Հետևաբար, Անկարան կարող է արդյունավետորեն արգելափակել ցանկացած որոշում, որը դեմ կլինի իր շահերին: Օրինակ՝ 2017թ. Թուրքիան արգելափակեց ՆԱՏՕ-ի փորձերը՝ գործընկերություն զարգացնել Ավստրիայի հետ,

³⁹ **Zanotti J., Clayton T.**, Turkey: Background and U.S. Relations In Brief, *CRS Report, Congressional Research Service*, 09.07.2019, p. 6.

⁴⁰ **Kuru T. A.**, Why is Turkey torn between the United States and Russia?, 11.06.2019, <https://www.opendemocracy.net/en/why-turkey-torn-between-united-states-and-russia/>.

ի պատասխան Վիեննայի կրկնվող վետոյի՝ Թուրքիայի ԵՄ անդամակցության դեմ⁴¹:

Անդրադառնալով Թուրքիայի՝ Դաշինքում պահելու ՆԱՏՕ-ի հիմնական դրդապատճառներին՝ հարկ է նշել, որ Թուրքիայի զինված ուժերը թվաքանակով և մարտունակությամբ դաշինքում զիջում են միայն ԱՄՆ-ին: Բացի այդ, Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակությունը շատ կարևոր է ինչպես Եվրոպայի, այնպես էլ ԱՄՆ-ի համար: Նա ՆԱՏՕ-ի միակ անդամն է, որը միաժամանակ ունի սահմաններ Մերձավոր Արևելքում (Սիրիա, Իրաք և Իրան) և Եվրոպայում: Կարևոր է նաև այն, որ Թուրքիան սիրիական ճգնաժամի պայմաններում հանդես է գալիս Եվրոպայում որպես հիմնական վերջնակետ՝ ընդունելով ավելի քան չորս միլիոն փախստականների: Ավելին, Թուրքիան վերահսկում է Բոսֆորը և Դարդանեղը, աշխարհի ամենակարևոր երկու կետերը, որոնք պատմականորեն կանխել են ռուսական մուտքը Միջերկրական ծով: ՆԱՏՕ-ի համար լուրջ նշանակություն ունի նաև «Ինջիրլիք» ավիաբազան և «Կուրեցիկ» ռադիոլոկացիոն կայանը (բալիստիկ հրթիռներ զսպող կայան իրանական սահմանից մոտ 300 մղոն հեռավորության վրա), որոնք ապահովում են ՆԱՏՕ-ի կենսունակությունը՝ պաշտպանելու Եվրոպան Մերձավոր Արևելքից բխող սպառնալիքներից⁴²: «Ինջիրլիք» բազայի արդյունավետությունն ակնհայտորեն երևաց Բալկաններում, Աֆղանստանում և Սիրիայում պատերազմների ժամանակ: Թեև Կիպրոսը, Քուվեյթը և Կրետեն այլընտրանք են համարվել Թուրքիային,

⁴¹ **Lute D., Burns N.**, NATO at Seventy: An Alliance in Crisis, *Project on Europe and the Transatlantic Relationship Report*, Belfer Center for Science and International Affairs Harvard Kennedy School, 2019, p. 49;

Toperich S., Noi Ü. A., Turkey and Transatlantic Relations, *Center for Transatlantic Relations*, The Paul H. Nitze School of Advanced International Studies, The Johns Hopkins University, 2017, p. 44.

⁴² **Demirdas A.**, Should Turkey be Kicked out of NATO?, - *Jerusalem Post*, 31.07.2019, <https://www.jpost.com/Opinion/Should-Turkey-be-kicked-out-of-NATO-597323>; **Kelleher C.**, Missile Defense, Extended Deterrence, and Nonproliferation in the 21st Century, *Center for International and Security Studies at Maryland, School of Public Policy*, 2017, pp. 9-22.

սակայն Վաշինգտոնը չի փորձել այդ տարբերակներն օգտագործել, քանի որ Ինջիրլիքի ռազմավարական դիրքը և ենթակառուցվածքները գրեթե անփոխարինելի են: Այսպիսով, Թուրքիայի դուրս գալը ՆԱՏՕ-ից ձեռնաստու չէ կողմերից որևէ մեկի համար: Սակայն կարևոր է պարզել՝ արդյո՞ք դա Անկարայի՝ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի դեմ «ռուսական խաղաքարտի» օգագործման հերթական փորձն է, թե Թուրքիայի արտաքին քաղաքականության իրական շրջադարձ: Ըստ Ա. Կրուկի, «Եթե Թուրքիան իսկապես նպատակաուղղված է շրջվել դեպի Ռուսաստանը, ապա, իհարկե, դա մեծ ռազմավարական նշանակություն կունենա: Դա կնշանակի Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի գերիշխանության վերջին իրական հենակետի անհետացում, ինչպես նաև Ռուսաստանի շուրջ ՆԱՏՕ-ի ձևավորած օղակի փլուզում»⁴³:

Ընդգծելով, որ Թուրքիան և Միացյալ Նահանգներն արդեն 60 տարի է ռազմավարական դաշնակիցներ են ՆԱՏՕ-ի շրջանակներում, Էրդոհանը զգուշացրել է. «Եթե Վաշինգտոնը չդադարի Թուրքիայի նկատմամբ միակողմանի և անհարգալից մոտեցում դրսևորել, ապա մենք կսկսենք նոր բարեկամներ ու դաշնակիցներ փնտրել»⁴⁴:

Թուրք-ռուսական համագործակցության նախադրյալներն ու զարգացման հեռանկարները

Ռուսաստանին ու Թուրքիային միավորում է ինչպես ընդհանուր աշխարհագրական դիրքը Եվրոպայի և Ասիայի հանգույցներում, այնպես էլ զարգացման բարդ փուլերը: Միաժամանակ, աշխարհաքաղաքական բաղադրիչը, մասնավորապես, տարածաշրջանային մրցակցությունը եղել և հանդիսանում է ռուս-թուրքական

⁴³ Крук А., Эрдоган между Россией и США. Что будет с идеей неоосманизма, 11.08.2016, <http://www.globalaffairs.ru/global-processes/Erdogan-mezhdu-Rossiei-i-SShA-Chto-budet-s-ideei-neosmanizma-18309>.

⁴⁴ Erdogan: How Turkey Sees the Crisis With the U.S., *New York Times*, 10.08.2018, <https://www.nytimes.com/2018/08/10/opinion/turkey-erdogan-trump-crisis-sanctions.html>.

փոխգործակցության բաղկացուցիչ մասը երկկողմ հարաբերությունների զարգացման բոլոր փուլերում: Այդ առումով երկկողմ հարաբերությունների էվոլյուցիան առավել ակնհայտ է այն տարածաշրջաններում, որտեղ և Ռուսաստանը, և Թուրքիան ունեն պատմականորեն ձևավորված շահեր:

2015թ. նոյեմբերին СУ-24 ուժակոծիչի կործանման հետևանքով ռուս-թուրքական հարաբերություններում 7 ամիս տևած ճգնաժամից հետո սկսվեց հարաբերությունների կարգավորման գործընթաց, ինչը պայմանավորված էր նաև երկու երկրների համար ստեղծված բավական բարդ աշխարհաքաղաքական և տնտեսական իրավիճակի ազդեցությամբ: Թուրք-ռուսական հարաբերությունների մերձեցմանը նպաստեց նաև Թուրքիայում 2016թ. հուլիսի 15-ի գիշերն իրագործված հեղաշրջման ձախողված փորձը, որը զգալի արձագանք ունեցավ ոչ միայն պետության ներսում, այլև միջազգային ասպարեզում: Ի տարբերություն Արևմուտքի, որը դատապարտեց Թուրքիայի իշխանությունների կոշտ գործողությունները երկրի ներսում⁴⁵, Ռուսաստանը հրապարակայնորեն աջակցեց Էրդողանին⁴⁶, ինչի արդյունքում, Թուրքիայում հեղաշրջման ձախողված փորձից հետո Էրդողանն առաջինն այցելեց ոչ թե ՆԱՏՕ-ի անդամ երկրներից մեկն, այլ Ռուսաստան, որի հետ հարաբերությունները մինչև վերջերս հեռու էին բարեկամական լինելուց: 2016թ. օգոստոսի 9-ին երկկողմ հարաբերությունների ճգնաժամից հետո Սանկտ Պետերբուրգում կայացավ Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների առաջին հանդիպումը, որի ժամանակ նրանք հայտարարեցին բոլոր ուղղություններով համագործակցությունը վերականգնելու, հարաբերությունները

⁴⁵ **Bodkin H., Millward D., Ensor J., Rothwell J.**, Turkey coup attempt: World leaders warn President Erdogan not to use uprising as excuse for crackdown as more than 6,000 arrested, *The Telegraph*, 18.07.2016, <https://www.telegraph.co.uk/news/2016/07/17/turkey-coup-plot-president-erdogan-rounds-up-thousands-of-soldie/>.

⁴⁶ **Çelikpala M., Erşen E.**, Turkey's Black Sea Predicament: Challenging or Accommodating Russia?, *PERCEPTIONS*, Summer 2018, **23**, 2, 72-92; **Özertem S. H.**, Turkey and Tussia: A Fragile Friendship, *Turkish Policy Quarterly*, 2017, **15**, 4, 121-134.

նախաճգնաժամային մակարդակի հասցնելու և Միքիայի հարցում փոխզիջումների որոնման պատրաստակամության մասին⁴⁷, ինչը լուրջ անհանգստություն առաջացրեց Արևմուտքում⁴⁸:

Մոսկվայի և Անկարայի միջև քաղաքական հարաբերությունների կարգավորման ջանքերը լուրջ խթան հանդիսացան կողմերի համար՝ ինտենսիվորեն զարգացնելու համագործակցությունը առևտրատնտեսական, էներգետիկ, գազային արդյունաբերության և միջուկային ոլորտներում, որոնց շուրջ գործակցությունը սառեցվել էր ճգնաժամի հետևանքով: Կոնկրետ քայլեր ձեռնարկվեցին «Թուրքական հոսք» խողովակաշարի և «Աքկույու» ատոմակայանի շինարարական նախագծերի վերաբերյալ: 2018թ. նոյեմբերի 19-ին Ստամբուլում երկու երկրների նախագահները հայտարարեցին Ռուսաստանը Թուրքիայի եվրոպական ամերին կապող «Թուրքական հոսքի» գազային խողովակաշարի ստորջրյա առաջին հատվածի ավարտի մասին⁴⁹, որի կառուցման վերաբերյալ միջկառավարական համաձայնագիրը ստորագրվել էր 2016թ. հոկտեմբերին⁵⁰: Նախագծի իրագործմամբ Թուրքիան նպաստում էր Եվրոպայի խոշոր գազային մատակարարը լինելու Ռուսաստանի երկարաժամկետ ռազմավարությանը՝ միաժամանակ նվազեցնելով Ուկրաինայի տարանցիկ միջանցքի նշանակությունը: Այսպիսով, Ուկրաինայով ու Բալթիկ ծովով առաքման երթուղիներից բացի ստեղծվում է ռուսական գազային երրորդ միջանցքը, ինչն առաջացնում էր Միացյալ Նահանգների շարունակական դիմակայությունը:

⁴⁷ **Koru S.**, The Resiliency of Turkey-Russia Relations, *Foreign Policy Research Institute, Black Sea Strategy Papers*, 2018, p. 16; **Rüma İ., Çelikpala M.**, Russian and Turkish Foreign Policy Activism in the Syrian Theater, *Uluslararası İlişkiler*, **16**, 62, 2019, p. 70.

⁴⁸ **MacFarquhar N.**, Russia and Turkey Vow to Repair Ties as West Watches Nervously, *The New York Times*, 09.08.2016, <http://www.nytimes.com/2016/08/10/world/europe/putin-erdogan-russia-turkey.html>.

⁴⁹ **Pierini M.**, Russia's Gas Strategy Gets Help From Turkey, *Carnegie Europe*, 03.12.2018, <https://carnegieeurope.eu/strategieurope/77855>.

⁵⁰ **Ediger Ş. V., Durmaz D.**, Energy in Turkey and Russia's Roller-Coaster Relationship, *Insight Turkey*, 2017, **19**, 1, 145-159.

Թուրք-ռուսական համագործակցության առանցքային բաղադրիչներից է Ռուսաստանի կողմից թուրքական «Աքկոյու» առաջին ատոմակայանի կառուցման նախագիծը: 20 մլրդ. դոլար արժողությամբ նախագծով նախատեսվում է կառուցել ատոմակայան 1200 մեգավատ հզորությամբ 4 ռեակտորով, որոնցից առաջինը պետք է շահագործման հանձնվի 2023թ.: 2018թ. Վ. Պուտինն ու Ռ. Թ. Էրդողանը տեսակոնֆերանսի ռեժիմում մասնակցեցին ատոմակայանի շինարարության մեկնարկի արարողությանը⁵¹:

Թուրք-ռուսական ճգնաժամի հաղթահարումը բարենպաստ ազդեցություն ունեցավ նաև զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա: Թուրքիայի մշակույթի և զբոսաշրջության նախարարության տվյալների համաձայն՝ 2018թ. Թուրքիա այցելած ՌԴ քաղաքացիների թիվը կազմել է շուրջ 6 մլն., ինչը 25.4%-ով ավել էր քան 2017թ. (4.7 մլն. մարդ)⁵²:

Մեծանում են նաև Թուրքիայի և Ռուսաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալները, որոնք ճգնաժամի հետևանքով կտրուկ նվազել էին (2016թ. Ապրանքաշրջանառությունը կրճատվել էր 32,1%-ով՝ կազմելով 15.5 մլրդ. ԱՄՆ դոլար, որից արտահանումը 29%-ով (13.4 մլրդ. ԱՄՆ դոլար), ներմուծումը՝ 47%-ով (2.2 մլրդ. ԱՄՆ դոլար)⁵³: Մինչդեռ, 2018թ. Թուրքիայի ապրանքաշրջանառության ծավալները կազմել են 25.5 մլրդ. ԱՄՆ դոլար, որից ռուսական արտահանումը (21.3 մլրդ. ԱՄՆ դոլար), ներմուծումը՝ (4.2 մլրդ. ԱՄՆ դոլար)⁵⁴: Երկու երկրների

⁵¹ **Masumova R. N.**, Russia and Turkey: Resetting Economic Partnership, *PERCEPTIONS*, Summer 2018, **23**, 2, pp. 33-50; Russia starts building Turkey's first nuclear power plant, *World Nuclear News*, 03.04.2018, <http://www.world-nuclear-news.org/NN-Russia-starts-building-Turkeys-first-nuclear-power-plant-03041801.html>.

⁵² **Ситдиков Р.**, Межгосударственные отношения России и Турции, 14.02.2019, <https://ria.ru/20190214/1550722597.htm>.

⁵³ Российско-турецкие экономические отношения. Досье, 02.04.2018, <https://tass.ru/info/5088157>.

⁵⁴ **Климентьев М.**, Межгосударственные отношения России и Турции, 29.06.2019, <https://ria.ru/20190629/1555928137.html>; **Özel S., Uçar G.**, The Economics of Turkey-Russia Relations, *Edam: Centre for Economics and Foreign Policy Studies, Foreign Policy & Security*, 2019/10, p. 10.

ղեկավարները ցանկանում են այդ ծավալները հասցնել 100 մլրդ. ԱՄՆ դոլարի, ինչի մասին հայտարարել էր Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանը՝ 2019 թ. օգոստոսի 27-ին ՌԴ Ժուլուպկու օդանավակայանում կայացած «MAKS-2019» ավիացիոն-տիեզերական ցուցասրահի բացման արարողության ժամանակ⁵⁵:

Աշխարհաքաղաքական տարաձայնությունները հաղթահարելուն ուղղված երկու երկրների ղեկավարների ջանքերն անդրադարձան նաև ռազմաքաղաքական ոլորտում երկկողմ համագործակցության զարգացման վրա: 2016թ. վերջից Ռուսաստանն ու Թուրքիան սկսեցին համագործակցել Սիրիայում ռազմական գործողությունների դադարեցման ռեժիմի վերահսկման գործընթացում: Իսկ 2017թ. հունվարին Ռուսաստանի ռազմաօդային ուժերը Թուրքիայի օդուժի հետ սկսեց հարվածներ հասցնել Սիրիայի ահաբեկչական խմբավորումների դիրքերին:⁵⁶ 2017թ. դեկտեմբերին Թուրքիան և Ռուսաստանը ստորագրեցին ռուսական C-400 հակաօդային պաշտպանության համակարգերի ձեռքբերման պայմանագիր, ինչը ոչ միայն լուրջ ճգնաժամ առաջացրեց ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ Թուրքիայի հարաբերություններում, այլև թուրք-ամերիկյան հարաբերությունները հասցրեց պատմության ամենացածր մակարդակին:

Ըստ Փ.Հանսբերի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների վերականգնումն օգնեց Ռուսաստանին հասնել առնվազն երկու նպատակների: Նախ, ռուս-թուրքական համագործակցությունը նպաստեց ՆԱՏՕ-ի հեղինակության անկմանը, որի հետ Ռուսաս-

⁵⁵ Турция намерена увеличить товарооборот с РФ до \$100 млрд, 27.08.2019, <https://www.vestifinance.ru/articles/124028>; Turkey aims to boost trade with Russia to \$100bn, 28.08..2019, <https://www.rt.com/business/467449-russia-turkey-trade-turnover/>.

⁵⁶ Начальник Главного оперативного управления Генштаба ВС РФ генерал-лейтенант Сергей Рудской провел брифинг для представителей СМИ, 18.01.2017, https://function.mil.ru/news_page/country/more.htm?id=12108689@egNews; **Grove T.**, Russian and Turkish Jets Strike Islamic State Positions in Northern Syria, *The Wall Street Journal*, 18.01.2017, <https://www.wsj.com/articles/russian-and-turkish-jets-strike-islamic-state-positions-in-northern-syria-1484764790>.

տանն ունի լարված հարաբերություններ, և որի գոյությունը Սառը պատերազմի ավարտից հետո Մոսկվայում լուրջ անհանգստություն է առաջացնում: Երկրորդ, այս համագործակցությունը Ռուսաստանին հնարավորություն տվեց անարգել օգտագործել թուրքական նեղուցները⁵⁷:

Չնայած ԱՄՆ-ի ճնշումներին՝ Էրդողանը ոչ միայն չհրաժարվեց ռուսական ՀՕՊ համակարգերի ձեռքբերման գործարքից, որի երկրորդ խմբաքանակը Թուրքիա մատակարարվեց 2019 թ. սեպտեմբերին⁵⁸, այլև ցանկություն էր հայտնել խորացնել Ռուսաստանի հետ համագործակցությունը ռազմատեխնիկական ոլորտում, ներառյալ՝ ռազմական ավիացիայի մասով: Ըստ ռուսական և արևմտյան ԶԼՄ-ի, օգտվելով Վաշինգտոնի կողմից Թուրքիային F-35 կործանիչների ծրագրից հեռացնելու որոշումից, Ռուսաստանը առաջարկել էր Անկարային ձեռք բերել СУ-35 կործանիչներ՝ F-35-ի փոխարեն⁵⁹: Մասնավորապես, 2019թ. օգոստոսին Մոսկվայում Պուտին-Էրդողան հանդիպման ժամանակ քննարկվել էր ոչ միայն ռուսական СУ-35 կործանիչների հարցն, այլև համատեղ աշխատանքի հնարավորությունը նոր СУ-57-երի ծրագրում⁶⁰:

⁵⁷ **Хансбери П.**, Возможен ли поворот Турции от НАТО к России?, *Комментарий*, 30, 13.09.2019, <http://minskdialogue.by/research/opinions/vozmozhen-li-povorot-turtcii-ot-nato-k-rossii>.

⁵⁸ Минобороны России подтвердило завершение второго этапа поставок в Турцию С-400, 15.09.2019, <https://tass.ru/armiya-i-opk/6887626>; **Gumrukcu T.**, Turkey says delivery of second S-400 battery complete, *Reuters*, 15.09.2019, <https://www.reuters.com/article/us-turkey-security-usa-defense-russia/turkey-says-delivery-of-second-s-400-battery-complete-idUSKBN1W00AQ>.

⁵⁹ **Владимиров В.**, Москва предлагает Анкаре Су-35 взамен F-35, 19.07.2019, <https://www.golos-ameriki.ru/a/experts-on-possible-sale-of-su-35-to-turkey/5006962.html>, **Episkopos M.**, Could Turkey Lose the F-35 Stealth Fighter and Pass on Russia's Su-57?, *The National Interest*, 17.09.2019, <https://nationalinterest.org/blog/buzz/could-turkey-lose-f-35-stealth-fighter-and-pass-russias-su-57-81321>.

⁶⁰ **Tétrault-Farber G.**, Erdogan says Turkey wants to continue defense cooperation with Russia, *Reuters*, 27.08.2019, <https://www.reuters.com/article/us-russia-turkey-planes/erdogan-says-turkey-wants-to-continue-defense-cooperation-with-russia-idUSKCN1VH1QS>.

Վերոնշյալ նախագծերն ու C-400 հակահրթիռային համակարգերի գործարքը վկայում են, որ Մոսկվան արդյունավետորեն է օգտագործում թուրք-ամերիկյան լարվածությունը և Անկարայի հարաբերական դիվանագիտական մեկուսացումը:

Միրիական ճգնաժամը Ռուսաստան-Թուրքիա-ԱՄՆ շահերի բախման առանցքում

Միրիական ճգնաժամը, որը սկզբում դիտվում էր որպես ավտորիտար ղեկավարի դեմ հերթական ապստամբություն, ժամանակի ընթացքում վերածվել է դաժան միջնորդավորված պատերազմի՝ բազմաթիվ տարածաշրջանային տերությունների և համաշխարհային գերտերությունների ներգրավմամբ: Մասնավորապես, 2014թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի ղեկավարած կոալիցիան քրդական ցամաքային ուժերին աջակցելու նպատակով սկսեց օդային հարվածներ հասցնել ԻՊ դիրքերին և ենթակառուցվածքներին⁶¹, իսկ 2015թ. սեպտեմբերի 30-ին հակա-մարտության մեջ ներքաշվեց Ռուսաստանը⁶², որի օդատիեզերա-կան ուժերի կողմից սիրիական ընդդիմության և ԻՊ-ի դիրքերի զանգվածային ուժակոծություններից հետո իրավիճակը ծայրաստիճան խառնաշփոթ ու պայթյունավտանգ դարձավ:

ՌԴ միջամտության արդյունքում սիրիական ճակատում փոխվեց ուժերի հարաբերակցությունը: Միրիայի կառավարական գորքերին հաջողվեց վերադարձնել վերահսկողությունը Հալեպ նահանգի և իսլամիստների գրաված այլ կարևոր քաղաքների վրա⁶³: Միաժամանակ, ԺԻՈՒ-ի զինված ստորաբաժանումները ԱՄՆ-ի

⁶¹ **Ford M. C.**, Syria: Can International Law Cope? Workshop Report, *International Law Studies*, **92**, 2016, 340-352.

⁶² **Coşkun B.B.**, Turkey's Relations with Russia after the Failed Coup: A Friend in Need of a Friend Indeed?, *New Middle Eastern Studies*, 2019, 9 (1), 36-52; **Mamedov R., Lukyanov G.**, Russia and Turkey: Approaches to Regional Security in the Middle East, *PERCEPTIONS*, Summer 2018, **23**, 2, 51-71.

⁶³ **Ахмедов В. М.**, Сирийское восстание: история, политика, идеология, - Институт востоковедения РАН., М., 2018, с. 138.

աջակցությամբ ազատագրեցին Ռաքքան և Սիրիայի հյուսիս-արևելքը⁶⁴: ԻՊ-ի վերահսկողության տակ է մնացել միայն Սիրիայի Իդլիբ նահանգը: Այս ձեռքբերումներն ամրապնդել են Ասադի դիրքերը, որոնք նախկինում բավական երեքուն էին թվում:

Ռուսաստանի միջամտությունը սիրիական հակամարտությանը լուրջ տարաձայնություններ առաջացրեց թուրք-ռուսական հարաբերություններում, իսկ 2015թ. նոյեմբերին թուրքական օդուժի կողմից ռուսական ռմբակոծիչը խոցելուց հետո երկու երկրների հարաբերությունները ծայրաստիճան լարվեցին: Սակայն, 7 ամսյա ճգնաժամից հետո Մոսկվայի և Անկարայի միջև հարաբերությունների կարգավորման արդյունքում Թուրքիան հնարավորություն ստացավ Սիրիայում իրականացնել «Եփրատի վահան» և «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունները⁶⁵, ինչպես նաև Ռուսաստանի ու Իրանի հետ մասնակցել սիրիական խնդրի կարգավորման Աստանայի գործընթացին, որը սկսվել էր 2017թ. հունվարին⁶⁶:

Այսպիսով, Սիրիայի հետպատերազմական ապագայի վերաբերյալ քննարկումների գլխավոր ձևաչափն աստիճանաբար դարձավ «Աստանայի գործընթացը», որը միավորեց այս տարածաշրջանի երեք կարևորագույն խաղացողներին, որոնք վերջին երեք դարերի ընթացքում մշտապես եղել են հակառակորդ ու թշնամի երկրներ: Բնականաբար, սիրիական ճգնաժամում ներգրավված դերակատարները չեն սահմանափակվում նշված երկրներով, սակայն ակնհայտ է, որ վերջին տարիներին հենց այս եռյակն է դարձել առավել ազդեցիկը: Հատկանշական է, որ այս ձևաչափի քննարկումների գլխավոր սկզբունքը (Իրանի և Ռուսաստանի

⁶⁴ **Боровкова М.И.**, Борьба США с "Исламским государством" в Сирии при администрации Д. Трампа: 2017 – 2019 гг., - *Мировая политика.*, № 2., 2019., сс. 12-21.

⁶⁵ **Yeşiltaş M., Seren M., Özçelik N.**, Operation Euphrates Shield Implementation and Lessons Learned, *SETA: Foundation for Political, Economic and Social Research*, İstanbul, 2017, pp. 1-57; **Kasapoğlu C., Ülgen S.**, Operation Olive Branch: A Political–Military Assessment, *Edam: Centre for Economics and Foreign Policy Studies, Foreign Policy & Security*, 2018/2, pp 1-16.

⁶⁶ **Mezra K., Varvelli A.**, MENA Region: A Great Power Competition, *ISPI and Atlantic Council*, 2019, pp. 56-57.

դրդմամբ) Միբիայի տարածքային ամբողջականության պահպանումն է և պատերազմի շուտափույթ ավարտը:

Իր հերթին Անկարան, ելնելով երկրի անվտանգությանը սպառնացող վտանգից, լրջորեն անհանգստանում էր իր հետ սահմանի երկայնքով ձգվող քրդական ինքնավար շրջանի գոյությունից: Այդ սպառնալիքի չեզոքացմանն էր նպատակաուղղված 2019թ. հոկտեմբերի 9-ին «Խաղաղության ակունք» ռազմական գործողությունների մեկնարկը Միբիայի հյուսիսարևելքում: Ռ. Թ. Էրդողանը հայտարարել էր, որ «Խաղաղության ակունք» գործողության նպատակն է «վերացնել Թուրքիա-յի հարավային սահմանին գտնվող ահաբեկչության միջանցքը, չեզոքացնել քուրդ զինյալներին և «Իսլամական պետության» ջոկատները, ստեղծել անվտանգության գոտի և ապահովել սիրիացի փախստականների համար վերադարձի պայմաններ»⁶⁷:

Միջազգային հանրությունը, սակայն, լուրջ չընդունեց Թուրքիայի քրդական սպառնալիքին առնչվող այդ պատճառաբանությունը: Երբ թուրքական զորքերը, Անկարայի անմիջական նախաձեռնությամբ կազմավորված «Միբիայի ազգային բանակի» ուղեկցությամբ շարժվում էին դեպի Թել Աբյադ և Ռաս ուլ-Այն, ՄԱԿ-ը, Եվրոպական միության բոլոր 28 երկրները, Արաբական լիգան, աֆրիկյան երկրները, Վատիկանը, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Իրանը, Չինաստանը, ինչպես նաև Իսրայելը միաձայն դատապարտեցին Թուրքիային⁶⁸: Ոչազրավ է, որ թուրքական ներխուժումը

⁶⁷ **Stickings T.**, Recep Tayyip Erdogan warns that he will start wiping out Kurdish 'terrorists' in new assault tomorrow and boasts about 'neutralising' 765 fighters, 21.10.2019, <https://www.dailymail.co.uk/news/article-7595479/Turkey-resume-onslaught-against-Kurdish-fighters-Erdogan-says.html>; **Smith S.**, Turkey launches military operation in northeast Syria after U.S. withdraws, 10.10.2019, <https://www.nbcnews.com/news/world/turkey-launches-operation-syria-3-days-after-trump-announces-u-n1063576>.

⁶⁸ **Kaplan Y.**, Turkey: the spring of peace, *Yeni Şafak*, 11.10.2019, <https://www.yenisafak.com/en/columns/yusufkaplan/turkey-the-spring-of-peace-2047196>; World leaders unite in condemnation of Turkey's Syria operation, 11.10.2019, <https://www.nbcnews.com/news/world/world-leaders-unite-condemnation-turkey-s-syria-operation-n1064591>.

պատճառ դարձավ, որ դատապարտողների ճամբարում հայտնվեն վաղեմի հակառակորդներ Իսրայելն ու Պաղեստինը:

Սիրիա թուրքական զորքերի վերջին ներխուժումը նոր լարվածություն առաջացրեց թուրք-ամերիկյան հարաբերություններում: ԱՄՆ-ի նախագահ Դ. Թրամփը սոցցանցով սպառնաց Թուրքիային, թե իր նախանշած շրջանակը խախտելու դեպքում կջախջախի թուրքական տնտեսությունը, իսկ Պենտագոնը հայտարարեց, որ Սիրիայի հյուսիս-արևելյան շրջաններում փակել են օդային տարածքը թուրքական ռազմական ինքնաթիռների առջև⁶⁹: Չնայած ամերիկյան սպառնալիքներին, թուրքերի ռազմական գործողությունը հնարավոր եղավ այն բանից հետո, երբ ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի կարգադրությամբ Պենտագոնը սկսեց դուրս բերել ոչ մեծաթիվ ամերիկյան ուժերը Սիրիայի այն հատվածից, որը գտնվում էր քրդերի հսկողության ներքո: «Խաղաղության ակունքը» հնարավորություն ընդձեռեց Անկարային մանևրելու տարածաշրջանում Ռուսաստանի և ԱՄՆ-ի ունեցած հակոտնյա շահերի շրջանակում: Մի կողմից Թուրքիան համաձայնեց 2019թ. հոկտեմբերի 17-ին պաշտոնական այցով Անկարայում գտնվող Միացյալ Նահանգների փոխնախագահ Մայք Փենսի առաջարկությանը՝ Սիրիայի հյուսիսում 120 ժամով հրադադար հաստատել, ինչը հնարավորություն կտար քրդական խմբավորումներին հինգ օրվա ընթացքում ամերիկացիների օգնությամբ դուրս գալ սահմանամերձ շրջաններից, որոնք Թուրքիան սահմանել էր որպես «անվտանգության գոտի»⁷⁰, մյուս կողմից Էրդողանը շտապ արձագանքեց Վ. Պուտինի հրավերին և հոկտեմբերի 22-ին

⁶⁹ **Gaouette N.**, As Trump threatens to destroy Turkey's economy and Kurds die, many wonder if penalties will have teeth, *CNN*, 15.10.2019, <https://edition.cnn.com/2019/10/14/politics/trump-turkey-sanctions-skepticism/index.html>; Turkey-Syria border: Trump threatens to 'obliterate' Turkish economy, *BBC*, 08.10.2019, <https://www.bbc.com/news/world-middle-east-49966216>.

⁷⁰ **Fabian J., Hacaoglu S.**, Turkey, U.S. Agree to Brief Cease-Fire to Allow Kurdish Retreat, *Bloomberg*, 18.10.2019, <https://www.bloomberg.com/news/articles/2019-10-17/turkey-agrees-to-120-hour-cease-fire-in-syria-pence-says>.

Ժամանեց Սոչի: Ռուսաստանի և Թուրքիայի նախագահների բանակցու-թյունների արդյունքում, ըստ Վլադիմիր Պուտինի, կողմերին հաջողվել էր ընդունել ճակատագրական որոշումներ Սիրիայում տիրող իրավիճակի շուրջ: Ստորագրվեց ռուս-թուրքական հուշագիր, որի առանցքային կետերն էին.

1. Երկու երկրները հաստատում են հավատարմությունը Սիրիայի քաղաքական միասնությունը ու տարածքային ամբողջականությունը և Թուրքիայի ազգային անվտանգու-թյունը պահպանելու հարցում:
2. Նախագահները շեշտում են վճռականությունը՝ պայքարելու ահաբեկչության բոլոր ձևերի և դրսևորումների դեմ և վերացնելու Սիրիայի տարածքում անջատողակա-նության օրակարգը:
3. «Խաղաղության ակունք» ռազմական գործողության տարած-քում, որն ընդգրկում է Թել Աբյադը և Ռաս ալ-Այնը՝ 32 կմ խորությամբ, կպահպանվի հաստատված ստատուս-քվոն:
4. Երկու կողմերը հաստատում են Ադանայի համաձայնագրի կարևորությունը: ՌԴ-ն հեշտացնելու է Ադանայի համաձայ-նագրի կետերի կիրառումը:
5. Հոկտեմբերի 23-ին, ժամը 12:00-ից սկսած ռուսական ռազմական ուստիկանությունը և Սիրիայի սահմանապահ-ները ԺԻՈՒ-ի ուժերի՝ Թուրքիայի սահմանից 30 կմ խորու-թյամբ դուրսբերումն ապահովելու նպատակով մտնելու էին Թուրքիա-Սիրիա սահմանի սիրիական այն հատվածները, որոնք դուրս էին մնացել «Խաղաղության ակունք» ռազմա-կան գործողության շրջանակներից: Այդ գործընթացն ավարտվելու էր 150 ժամում: Նույն պահից սկսած «Խաղա-ղության ակունք» ռազմական գործողության տարածքի արևելյան և արևմտյան կողմերում, բացառությամբ Ղամիշ-լիի, 10 կմ խորությամբ ռուսական և թուրքական ստորաբա-ժանումները սկսելու էին համատեղ պարեկություն:
6. Սիրիայի քրդական բոլոր ուժերը դուրս էին բերվելու Մանբիջից և Թել-Ռեֆաթից:

7. Երկու կողմերը միջոցներ էին ձեռնարկելու ահաբեկչական տարրերի ներթափանցումը կանխելու համար:
8. Համատեղ աշխատանք էր իրականացվելու փախստականների անվտանգ ու կամավոր վերադարձը հեշտացնելու նպատակով:
9. Ստեղծել դիտորդական համատեղ մեխանիզմ, որը վերահսկելու և համակարգելու է հուշագրի իրականացումը:
10. Թուրքիան և Ռուսաստանը շարունակելու էին Աստանայի ձևաչափի շրջանակներում սիրիական հակամարտության մնայուն քաղաքական լուծում գտնելու ուղղությամբ աշխատանքները և աջակցելու էին Սահամանադրական հանձնաժողովի աշխատանքներին:⁷¹

Այս գործարքը շահեկան էր գրեթե բոլոր կողմերի համար: Անկարան, առանց քրդերի հետ լայնածավալ պատերազմի, ստացավ այն, ինչ ցանկանում էր՝ բուֆերային գոտի սահմանի երկայնքով, Դամասկոսը, առանց «սիրիական Քրդստանի» հետ պատերազմի, վերականգնեց ինքնիշխանությունը Միրիայի հյուսիս-արևելքում, Մոսկվան ստացավ այն, ինչ ուզում էր՝ ամերիկացիները լքում են Միրիան (ամենայն հավանականությամբ, կմնա միայն ԱՄՆ զորքերի մի փոքր զորախումբ), և ԱՄՆ նախագահ Դ. Թրամփը նույնպես ստացավ իր ուզածը՝ դադարեցնել Միացյալ Նահանգների մասնակցությունը մի շարք ձգձգված պատերազմներից գոնե մեկում:

Այս աշխարհաքաղաքական խոշոր խաղի միակ պարտվողները քրդերն էին: Ավելի քան չորս տարի, գտնվելով «Իսլամական պետության» դեմ պատերազմի առաջնագծում, ջախջախելով այդ ահաբեկչական խմբավորումը և ստեղծելով կիսաինքնավար վարչակազմ ԻՊ-ից ազատագրված տարածքներում, հետագայում կորցրեցին և՛ այդ տարածքները, և՛ իրենց ինքնավարությունը:

⁷¹ **Hodge N.**, Putin and Erdogan just did a deal on Syria. The US is the biggest loser,- *CNN*, 23.10.2019, <https://edition.cnn.com/2019/10/22/middleeast/putin-erdogan-syria-deal-hodge-analysis-intl/index.html>; **Химшиашвили П.**, угин и Эрдоган договорились по Сирии. Главное, 22.10.2019, <https://www.rbc.ru/politics/22/10/2019/5daf46a19a7947e2eade81a6>.

Միացյալ Նահանգները լքեցին նրանց: Թուրքիան ումբակոծում էր նրանց: Ռուսաստանի համար նրանք պարզապես զինվոր էին աշխարհաքաղաքական շախմատի տախտակի վրա⁷²:

Սոչիի համաձայնագիրը Ռուսաստանի համար կարևոր հաջողություն էր: Ամերիկյան զորքերը Սիրիայից դուրս բերելուց հետո Ռուսաստանը դարձավ հիմնական ռազմական ուժը և առաջատար քաղաքական դերակատարը սիրիական հակամարտությունում: Համաձայնագիրը հաստատեց, որ Մոսկվան ի վիճակի է որոշումներ պարտադրել ինչպես Թուրքիային, այնպես էլ սիրիական ղեկավարությանը (այն չի մասնակցել բանակցություններին), քրդերին (հոկտեմբերի սկզբին նրանք վերահսկում էին Սիրիայի տարածքի մեկ երրորդը և օգտվում էին ԱՄՆ-ի աջակցությունից), ինչպես նաև դաշնակից Իրանին: Սոչիի համաձայնագրի ստորագրմամբ սիրիական հակամարտությունը թևակոխեց նոր փուլ, որտեղ արդեն բացակայում են ԱՄՆ-ն և քրդերը, որոնք քաղաքական և ռազմական կառույցների հետ կորցրեցին իրենց նախկին դերն ու նշանակությունը, իսկ թուրքերը ստիպված են չափավորել իրենց «ախորժակը»:

Երակացություն

1. Թուրք-ամերիկյան բազմամյա ռազմավարական հարաբերությունները վերջին տասնամյակում էական փոփոխություններ են կրել: ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո Թուրքիայի որդե-գրած արտաքին քաղաքականության նոր ուղենիշերը, ինչպես նաև ԱՄՆ-ի ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում մերձավորարևելյան նոր քաղաքականությունը տարաձայնություններ առաջացրեցին երկու դաշնակից երկրների միջև, որոնք ավելի խորացան «Արաբական գարնան» և սիրիական ճգնաժամի հետևանքով:

⁷² **Johny S.**, Putin takes centre stage in Syria, *The Hindu*, 25.10.2019, <https://www.thehindu.com/opinion/op-ed/putin-takes-centre-stage-in-syria/article29789785.ece>.

2. Քրդական հարցով, Ֆ. Գյուլենի գործոնով, ռուսա-կան C-400 ՀՕՊ համակարգերի ձեռքբերմամբ և մի շարք այլ հիմնախնդիրներով պայմանավորված Անկարայի ու Վաշինգտոնի հարաբերությունների ճգնաժամը ոչ միայն բացասական անդրադարձ ունենցավ երկու երկրների ռազմավարական հարաբերությունների և աշխարհաքաղաքական շահերի, այլև Թուրքիա-ՆԱՏՕ հարաբերությունների վրա՝ փոխադարձ անվստահության մթնոլորտ ստեղծելով:

3. Երկու երկրների միջև առկա ճգնաժամի արմատները շատ ավելի խորն են, քան քաղաքական և տնտեսական հակասությունները: Թուրքիան ցանկանում է, որ Միացյալ Նահանգները ճանաչի իրեն որպես տարածաշրջանային տերություն և հաշվի առնի Մերձավոր Արևելքում իր շահերը: Սակայն, մինչ այժմ ոչ մի հիմնահարցի առնչությամբ ամերիկացիներն այդ ակնկալիքներին չեն արձագանքել:

4. Միրիական հակամարտությունը հստակ ցույց տվեց տարածայնությունները ՆԱՏՕ-ի երկու դաշնակիցների միջև: Միրիայում ինքնավար քրդական միավորում ստեղծելու և դրան անվերապահորեն սատարելու ԱՄՆ-ի նկրտումները, ինչը Թուրքիան համարում է ազգային անվտանգության իրական սպառնալիք, Անկարային ստիպում է հայացքն ուղղել դեպի Մոսկվա: Էրդոդանի համար Պուտինն ավելի ուշադիր է Թուրքիայի մարտահրավերների նկատմամբ և ավելի հուսալի գործընկեր է, քան Դ. Թրամփը կամ ՆԱՏՕ-ի անդամ որևէ երկրի այլ ղեկավար:

5. Չնայած Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության հետևանքով վերջին ժամանակներս Արևմուտքում հաճախ քննարկվում է Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ից դուրս գալու հնարավորությունները, այնուամենայնիվ, դա տեսանելի ապագայում ձեռնատու չէ կողմերից որևէ մեկի համար: Թուրքիայի ղեկավարությունը գիտակցում է, որ Արևմուտքից կտրվելու դեպքում երկիրը ոչ միայն կզրկվի ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական աջակցությունից, այլև կհայտնվի Ռուսաստանի ազդեցության գոտում՝ զրկվելով մանրրեյու ու ինքնուրույն քաղաքականություն վարելու հնարավորությունից:

ՆԱՏՕ-ի համար Թուրքիան առանցքային նշանակություն ունի՝ պայմանավորված նախ իր աշխարհագրական բարենպաստ դիրքով, ինչպես նաև ռազմական դաշինքում զինված ուժերի թվաքանակով ու մարտունակությամբ:

6. Թուրք-ռուսական ճգնաժամի հաղթահարումը լուրջ խթան դարձավ երկկողմ բազմաոլորտ հարաբերությունների զարգացման համար՝ նոր հեռանկարներ ստեղծելով նաև ռազմատեխնիկական ոլորտում (C-400 համակարգերի գործարքը և Թուրքիայի կողմից ռուսական CY-35 կործանիչների ձեռքբերման հնարավորություններ):

7. Անկարան լրջորեն անհանգստանում է Սիրիայի հետ սահմանի երկայնքով ձգվող քրդական ինքնավար շրջանի գոյությամբ և Թուրքիայի ու Իրաքի քրդական ուժերի հետ դրանց համագործակցության հեռանկարով: Թուրքիան ձգտում է սահմանի երկայնքով ստեղծել 30-40 կմ խորությամբ «անվտանգության գոտի», որտեղ ցանկանում է վերաբնակեցնել իր տարածքում ապաստանած շուրջ երեք միլիոն սիրիացի սուննի արաբ գաղթականների, որոնք շատ ավելի լոյալ և վերահսկելի են Անկարայի համար, քան քրդերը:

8. Մոսկվայի համաձայնագրով հակամարտության մեջ ներգրավված շուրջ հինգ հազար հոգանոց ռազմական զորախումբ Մոսկվան (Թեհրանի հետ) ամրապնդեց Սիրիայի խարխլված ռեժիմը՝ վերականգնելով Դամասկոսի իշխանությունը ապստամբների դեմ պայքարում: Դա ապահովեց Սիրիայում ռուսական բազաների անվտանգությունը՝ ամրապնդելով Մոսկվայի ռազմական և դիվանագիտական ներկայությունը տարածաշրջանում:

9. Դիվանագիտական ոլորտում Ռուսաստանն ընդլայնեց իր գործընկերությունն Իրանի հետ, Թուրքիայի հետ լարված դիմակայությունը վերածեց ակտիվ զարգացող հարաբերությունների և դարձավ տարածաշրջանային կարևոր դերակատար, որի հետ հաշվի են նստում տարածաշրջանային մյուս դերակատարները: Ավելին, Ռուսաստանը վերջապես ստիպեց Միացյալ Նահանգներին լայնամասշտաբ բանակցություններ վարել տարածաշրջանային հիմնախնդիրների շուրջ, այն ժամանակ, երբ

Միացյալ Նահանգները և արևմտյան մյուս տերությունները պատժում են Կրեմլին՝ Ղրիմը «բռնակցելու» և Եվրոպայում Մոսկվայի այլ գործողությունների համար:

Russian-Turkish relations in the context of unprecedented Turkey-US tensions

GRIGOR ARSHAKYAN

Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Armenia

The article discusses the development course of the Turkish-American strategic relations, the main reasons behind the tension in these relations in recent years, as well as the prerequisites and prospects for its development. Due to disagreements between Turkey and the United States over a number of issues, the mistrust between the two countries has increased significantly, reflecting also on Turkey-NATO relations. The article also analyzes the positive impact of the crisis of the two NATO member states on the strengthening of the Turkish-Russian cooperation. Taking advantage of the crisis between Ankara and Washington, Russia is intensifying its multilateral ties with Turkey, which deepens Turkey's disagreements with the US and NATO. A particular emphasis is on the conflicting interests of Russia, Turkey and the United States in the Middle East region in recent years, and particularly within the Syrian conflict.